***Kadir Akın**, Ermeni Devrimci Paramaz: Abdülhamid'in İttihat Terakki'ye Ermeni Sosyalistleri ve Soykırım, Ankara, «Dipnot», 2015, 324 s.*

***Քադիր Աքքն**, Հայ հեղափոխական Փարամազը. հայ սոցիալիստները և ցեղասպանությունը՝ Աբդուլ Համիդից մինչև «Միություն և առաջադիմություն», Անկարա, «Դիփնոթ», 2015, 324 էջ*

2015 թ. ավարտին թուրքական համացանցային կայքերից մեկն այդ երկրի յոթ՝ «Ալեֆ», «Բելգե», «Ջան», «Դիփնոթ», «Գյունըշըղը», «Իլեթիշիմ», «Իսթոս» և «Մեթիս» տպագրատների շրջանում հարցում անցկացրեց. «2015 թ. ձեր տպագրատանը հրատարակված ո՞ր երեք գրքերի հանդեպ է ընթերցողն առավել մեծ հետաքրքրություն դրսևորել՝ գերազանցելով ձեր սպասելիքները»[1]: «Դիփնոթ» տպագրատան նշած գրքերի շարքը գլխավորում էր մեր կողմից գրախոսվող Քադիր Աքքնի հեղինակած «Հայ հեղափոխական Փարամազը» գիրքը: Հատկանշական է, որ 2015 թ. Թուրքիայում լույս տեսան նաև մի շարք այլ գրքեր, հրապարակվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնք ամենատարբեր տեսանկյուններից անդրադառնում էին հայերին, ինչպես նաև Հայոց ցեղասպանությանը[2]: Դրանց թվում, այդուհանդերձ, առանձնահատուկ ուշադրության է արժանի Ք. Աքքնի՝ ընթերցողների շրջանում կարճ ժամանակահատվածում ճանաչում գտած եռագլուխ աշխատությունը, որը պայմանավորված էր ոչ այնքան հեղինակի՝ թուրքական հասարակությանը հայտնի լինելու փաստով, որքան նրա բծախնդիր աշխատասիրությամբ և հետևողականությամբ[3]:

Թուրքական հասարակությանը քաջածանոթ քաղաքական գործիչ, գրող, հրապարակախոս Ք. Աքքնը ծնվել է 1957 թ. Քոջաելիում, 16 տարեկանից մասնակցել հակակառավարական բողոքի գործողությունների և ցույցերի, իսկ 19 տարեկանում Ստամբուլի դատարանը նրան հետախուզում է հայտարարել: Իշխանությունների կողմից նա շարունակ ենթարկվել է բռնաճնշումների, 1982 թ. ընկերոջ հետ բանտարկվել է և ազատ արձակվել 1988 թ.: 1990

---

[1] Sekiz Yayınevinin 2015'teki Sürprizli 24 Kitabı, BİA Haber Merkezi, 02.01.2016, http://bianet.org/biamag/kultur/170721-sekiz-yayinevinin-2015-teki-surprizli-24-kitabi [հասանելի էր 20.02.2016]:

[2] Օրինակ, վերոնշյալ հարցմանը մասնակցած մեկ այլ՝ «Ալեֆ» տպագրատան ներկայացրած երեք գրքերի ցանկը գլխավորում էր Նուրան Աքքայայի «Հայեր» աշխատությունը (**Akkaya N**., Ermeniler, İstanbul, 2015):

[3] Ք. Աքքնն օգտագործել է շուրջ 60 սկզբնաղբյուր, իսկ արխիվային տարբեր փաստաթղթեր օգտագործելու համար որոշ ժամանակ անցկացրել է Բեյրութում:

թ. քրդական հարցի վերաբերյալ ունեցած ելույթի պատճառով նա կրկին հայտնվել է իշխանությունների թիրախում: Մինչև նրա դեմ հարուցված քրեական գործի կարճումը նա շուրջ երկուսուկես տարի ստիպված է եղել ապրելու Շվեյցարիայում:

Ք. Աքընը 1994 թ. ստեղծված Միացյալ սոցիալիստական կուսակցության համահիմնադիրներից է, նաև Ժողովուրդների դեմոկրատական և Վերակազմյալ սոցիալիստական կուսակցությունների հիմնադիրներից: Նա հեղինակել է բազմաթիվ հոդվածներ, թղթակցել տարբեր հանդեսների, լրատվական գործակալությունների, 25 այլ հեղինակների հետ մեկտեղ հոդված տպագրել նաև «Ամոթ և պատիվ. 1915-2015՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակը» գրքում[1], հրատարակել «Սոցիալիզմի ճգնաժամը. միասնություն և վերակազմավորում»[2] աշխատությունը[3]:

Հայ ազատագրական շարժման գործիչ, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամ, գրող Փարամազի (Մատթեոս Սարգսյան) (1863-1915) հանդեպ Ք. Աքընի հետաքրքրությունը հասկանալի է[4]: Լինելով նրա գաղափարակիցը՝ սոցիալիստական գաղափարախոսության նվիրյալ հեղինակը մերթընդմերթ հանդիպել է Փարամազի գործունեությանը վերաբերող տարբեր նյութերի, բայց հայ ազատագրական շարժման ներկայացուցչի գործունեությունը ավելի խորն ուսումնասիրելու ցանկությունը առաջացել է 2013 թ.՝ Ստամբուլի Թաքսիմ հրապարակի Գեզի զբոսայգում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ[5]: Այդ մասին ակնարկում է նաև ինքը 2015 թ. փետրվարի 16-ին (էջ 11-13):

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին հեղինակը սկսում է ավելի կենտրոնանալ Փարամազի և նրա ընկերների գործունեության վրա: 2015 թ. խորհուրդը և այդ կապակցությամբ ինչ-որ բան ասելու պարտավորվածությունն են կարծես Ք. Աքընին ստիպել ձեռնամուխ լինելու սույն գրքի ստեղծմանը, որը Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով

---

[1] Տե՛ս **Çubukçu A**., **Hakkı Zariç C**., **Onaran N**., **Öztürk O**. (hzr.), Utanç ve Onur 1915 - 2015 Ermeni Soykırımı'nın 100, Yılıl, 2015, s 109-134.

[2] Տե՛ս **Akın K**., Sosyalizimin Krizi: Birlik ve Yeniden Kuruluş, İstanbul, 2012.

[3] Կենսագրական տվյալները սույն գրախոսության հեղինակներիս փոխանցել է Քադիր Աքընը՝ մեզ հետ անձնական զրույցի ժամանակ [05.01.2016]:

[4] Նրա մասին տե՛ս **Պողոսյան Հ**., Փարամազ, Երևան, 1992:

[5] 2013 թ. ամռանը այստեղ տեղի ունեցած հակակառավարական խոշոր ընդվզումը ցնցեց Թուրքիայի ներքաղաքական կյանքը: Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում և Թուրքիայի այլ խոշոր քաղաքներում հակակառավարական ելույթները ճնշվեցին ներքին անվտանգությունը պահպանող կառավարական ուժերի կողմից: Ցուցարարների և ոստիկանական ուժերի բախումների հետևանքով վիրավորվեցին հազարավոր մարդիկ, զոհվեցին շատերը, որոնց թիվը ճշգրտված չէ մինչ օրս: Այս մասին մանրամասն տե՛ս **Göle N**., Gezi – Anatomy of a Public Square Movement // Insight Turkey, vol. 15, n° 3, p. 7-14, **Yardımcı-Geyikçi Ş**., Gezi Park Protests in Turkey: A Party Politics View // The Political Quarterly, vol. 85, n° 4, p. 445-453:

կառուցվածքային և թեմատիկ առումներով որոշակի փոփոխություններ է կրել։

Հեղինակը չի սահմանափակվում միայն հայազգի հնչակյան գործչի կենսագրության և գործունեության լուսաբանմամբ, այլև փորձում է հնարավորինս ամբողջական անդրադարձներ կատարել Հայոց ցեղասպանության պատմությանը. «Ես ժամանակի հետ մրցում էի, որովհետև ցանկանում էի այս աշխատանքը ավարտին հասցնել Հայոց ցեղասպանության 100-ամյակի սկիզբը համարվող ապրիլի 24-ին։ Արդյունքում կարողացա ցանկությունս իրականության վերածել, բայց նաև գիտակցում եմ, որ կան որոշ թերություններ, և գիտեմ, որ թեման, որին նվիրված է այս աշխատանքը, պահանջում է ավելի համապարփակ ուսումնասիրություն» (էջ 13)։

Այս գրքի ստեղծման ևս մեկ դրդապատճառ կարող է համարվել Թուրքիայում առաջին սոցիալիստ գործչի անվան հետ կապված տարակարծությունների ծավալումը։ Լինելով սոցիալիստական գաղափարախոսության նվիրյալ՝ Ք. Աքընը խիստ կարևորում է այս հարցը, ինչը լիովին տրամաբանական է. նա չէր կարող չանդրադառնալ այս թեմային, երբ, փաստորեն, բացահայտել էր մի ճշմարտություն, որն արհամարհվում է Թուրքիայում։ Ըստ թուրքական տեսակետի՝ այդ երկրում առաջին սոցիալիստ գործիչը համարվում է Մուստաֆա Սուփհին[1], այնինչ 2015 թ. «Թարաֆին» տված հարցազրույցում Ք. Աքընը փաստում է, որ Օսմանյան կայսրությունում սոցիալիստական գաղափարախոսության առաջին նվիրյալը եղել է Փարամազը։ Լրագրողի՝ «Թուրքիայում մշտապես ասվում է, որ երկրում սոցիալիստական շարժման սկիզբը կապված է Մուստաֆա Սուփհիի անվան հետ, բայց Դուք պնդում եք, որ նրանից առաջ ևս մարդ է եղել» հարցին Աքընը տվել է հետևյալ պատասխանը. «Այո՛, անտարակույս։ Սկսելով ուսումնասիրությունը՝ ընկղմվեցի պատմության փոշոտ դարակներում մնացած մի ժամանակահատվածի մեջ։ Երբ Բեյրութում էի՝ ուսումնասիրության նպատակով, այնտեղի արխիվային փաստաթղթերում հանդիպեցի պատմական մի մոռացվող ժամանակահատվածի, որի մասին տեղյակ չէ գրեթե ոչ ոք։ Սրա պատճառն այն է, որ մենք գիտեինք, թե Թուրքիայում սոցիալիստական շարժումը սկսվում է 1921 թ. Սև ծովում սպանված Մուստաֆա Սուփհիով»[2]։

Գրքի առաջաբանում առավել մանրամասն անդրադարձ է կատարվում սոցիալիստական գաղափարախոսությանը, Թուրքիայում՝ դրա պատմությանը, սոցիալիստ գործիչների հանդեպ իրականացված բռնաճնշումներին՝ Փարամազից ընդհուպ մեր օրերը։ Պատահական չէ, որ առաջաբանի հեղինակը ոչ թե Ք. Աքընն է, այլ Թուրքիայում սոցիալիստական շարժման նշա-

---

[1] Նրա մասին տե՛ս **Yıldırım K.**, Osmanlı Sosyalist Hareketi İçinde Mustafa Suphi: Hayatı ve Fikirleri, Sosyoloji Dergisi, cilt 3, sayı 28, s. 101-121:

[2] Türkiye Sosyalist hareketi Paramaz'la başlıyor, Taraf, 26.04.2015, http://www.taraf.com.tr /turkiye-sosyalis-hareketi-paramazla-basliyor/ [հասանելի էր 20.02.2016]:

նավոր գործիչ Մահիր Սայլընը, որը 1970 թ. «Թուրքիայի ժողովրդի փրկություն» ճակատ-կուսակցության հիմնադիրներից է։ Գրքում պարբերաբար ակնարկվում է, որ Փարամազի գործունեությունը շատ բաներով նման է ժամանակակից Թուրքիայում քրդերի իրավունքների համար մարտնչող գործիչների պայքարին։

Ընդհանրապես հարկ է արձանագրել, որ հեղինակը ցանկացել է զուգահեռներ անցկացնել մեր օրերի Թուրքիայի, մասնավորապես այդ երկրի քրդերի և հարյուր տարի առաջ հայերի առջև ծառացած խնդիրների միջև։ Առաջաբանում այս մասին հստակ նշում է նաև Մահիր Սայլընը. «Ստամբուլի դատարանում հնչեցրած Փարամազի խոսքը շատ նման է այսօրվա Քրդստանի անկախության համար կռիվ մղող մարդկանց ասածներին։ Դատավորի՝ «դուք ուզում եք անկախ Հայաստա՞ն հիմնել» հարցի պատասխանը հարիր է իսկական ինտերնացիոնալիստին. «Մեզ համար մեկ հայրենիք գոյություն չունի։ Մենք սոցիալ-դեմոկրատներ ենք։ Մենք չենք պայքարում միայն հայերի փրկության համար, մենք պայքարում ենք ամբողջ մարդկության համար։ Մեր հայրենիքը Երկիրն է» (էջ 28)։

Այս ամենին զուգահեռ, սակայն, անհրաժեշտ է նշել, որ Ք. Աքընն ընդունում է և պարբերաբար հիշատակում, որ Հայոց ցեղասպանության իրականացման գործում մեծ է եղել քրդական բնակչության գործոնը։ Այս մասին շատ հստակ նշվում է հատկապես «Բանկ Օտոման» գործողությունից հետո սուլթան Աբդուլ Համիդ II-ի ձեռնարկած՝ հայերի կոտորածներին առնչվող հատվածում. «Համիդիե գնդերում ընդգրկված՝ շուրջ հինգ հարյուր քրդական բնակավայրերից զորակոչված քրդերի հետ միասին հայերի դեմ հարձակումներին մասնակցում էին նաև Ստամբուլի շրջակայքում բնակվող քուրդ կացնավորներ[1] և բեռնակիրներ» (էջ 68)։

Առաջին գլուխը, ընդհանուր առմամբ, նվիրված է աբդուլհամիդյան ժամանակաշրջանում տեղի ունեցած ոճրագործություններին և մանրամասներին, որտեղ հեղինակը փորձում է ներկայացնել Օսմանյան կայսրության ներքաղաքական իրավիճակը, որի պայմաններում հիմնադրվեցին հայկական կուսակցությունները։ Թեև նա նշում է, որ XX դարի շեմին Օսմանյան կայսրությունում գործունեություն էին ծավալել չորս հայկական կուսակցություններ[2], այդուհանդերձ առավել մանրամասնորեն անդրադառնում է

---

[1] Կացնավորի (թուրք.՝ Zülüflü baltacılar) մասնագիտությունը համարվում էր Օսմանյան վեցերորդ սուլթան Մուրադ II-ի (1421-1444) օրոք հիմնադրված պալատական դպրոցի (թուրք՝ Enderûn mektebi) կարևոր բաղկացուցիչներից մեկը։ Խաղաղ ժամանակներում նրանք ծառայում էին պալատում, ապահովում հարեմը ցախով։ Պատերազմական պայմաններում և արշավանքների ընթացքում նրանք գնում էին բանակի առջևից՝ հատելով նրա ճանապարհը խոչընդոտող անտառները (տե՛ս Türkiye Diyanet Vakfı İslam Ansiklopedisi, c. 5, s. 34)։

[2] Ք. Աքընը XX դարի շեմին իրենց գործունեությունը ծավալող երեք հայկական ազգային կուսակցություններին՝ Արմենական, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Հայ հեղափոխական

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություններին: Չնայած Ք. Աքընը հստակորեն ընդգծում է, որ հայկական կուսակցությունների ստեղծման և գործունեության հիմնական պատճառն ու նպատակը ազատ և անկախ Հայաստանի հռչակումն էին, այնուամենայնիվ հնչակյանների և Փարամազի առնչությամբ նշում է, որ այդ կուսակցությունը, վերոնշյալ նպատակները հետապնդելուց զատ, հստակորեն կրում էր սոցիալիստական գաղափարախոսության դրոշմը և իր պատմության ընթացքում մշտապես պաշտպանում ու քարոզում էր սոցիալիզմը:

Ուշագրավ է, որ վերոնշյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերը Ք. Աքընը ներկայացնում է ոչ թե թուրքական, հայկական կամ նույնիսկ քրդական տեսանկյուններից, այլ խիստ չեզոք դիրքերից: Նա չի հայտնում որևէ կարծիք, չի առաջադրում մեկնաբանություններ, այլ փաստում է պարզապես դեպքերի և իրադարձությունների հաջորդականությունը: Այդուհանդերձ անհրաժեշտ է շեշտել, որ նա բացասական վերաբերմունք է հայտնում երիտթուրքական վարչակարգի առնչությամբ: Հեղինակի նման տրամադրություններին կարելի է հանդիպել առաջին գլխի՝ ««Միություն և առաջադիմությունը» հիշեցնում է իր թուրք լինելը» ենթավերնագրում: «Շարժման (երիտթուրքական – *Ա. Գ., Հ. Դ.*) առաջին տարիներին, շատ կարճ ժամանակահատվածում կայսրությունում տիրապետող օսմանիզմ գաղափարախոսությունն իր տեղը զիջեց պանթյուրքիզմին»,– գրում է նա (էջ 106): Սրանով հեղինակը փորձում է ընթերցողին հասկացնել, որ երիտթուրքական շարժման տարածմանը զուգահեռ՝ կայսրությունում բնակվող ոչ թուրք բնակչության վիճակը ավելի է վատթարացել:

Ք. Աքընն առավել մանրամասնորեն ուսումնասիրում է հայ ժողովրդի վիճակն Օսմանյան կայսրությունում, հայկական կուսակցությունների և Փարամազի գործունեությունը երիտթուրքերի իշխանության օրոք: Մասնավորապես ներկայացված են 1908 թ. հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում հնչակյանների և դաշնակցականների փոխհարաբերություններն իթթիհաթականների հետ, ՍԴՀԿ և ՀՅԴ ընդհանուր ժողովները՝ ընդհուպ 1914 թ. Օսմանյան խորհրդարանի ընտրություններն[1] ու Առաջին աշխարհամարտի մեկնարկը: Պատմական ժամանակաշրջանի խճանկարն ամբողջացնելու համար նա կանգ է առնում նաև 1914 թ. փետրվարյան համաձայնության և օգոստոսյան թուրք-գերմանական գաղտնի պայմանագրի

դաշնակցություն, հավելում է նաև 1896 թ. հնչակյաններից անջատված Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը:

[1] Թեև օրենսդիրում ներկայացված էր միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, 87 խորհրդարանականներից 11-ը հայեր էին (ցանկի մասին տե՛ս **Karacakaya R.**, Meclis-i Mebusan seçimler ve Ermeniler (1908-1914), Yakın Dönem Türkiye Araştırmaları, sayı 3, s. 140): Ք. Աքընը հատուկ ընդգծում է, որ հայ պատգամավորների մի մասը, այդ թվում՝ Գրիգոր Զոհրապը, սպանվել են ցեղասպանության ժամանակ (էջ 175):

վրա, որով Օսմանյան կայսրությունը, փաստորեն, պարտավորվում էր որպես Գերմանիայի դաշնակից մասնակցել Առաջին համաշխարհային պատերազմին:

Ըստ Ք. Աքընի մոտեցման՝ առանձնակի ուշադրության է արժանի «Հնչակ» թերթում Փարամազի «հրապարակած վերջին՝ «Հայի պահանջը» հոդվածը[1], որը լավագույնս արտահայտում է թե՛ հնչակյանների ներկուսակցական խմորումները և թե՛ Փարամազի հոգեվիճակը: Նա հոդվածի հիմնական բովանդակությունը տեսնում է ի դեմս Փարամազի մտքերից մեկի. «Այնտեղ, ուր արդարություն չկա, ամեն հավատարմություն կեղծ է» (էջ 185): Նշենք, որ այս հոդվածի թարգմանությունը զետեղված է գրքի հավելվածում:

Երկրորդ գլխի վերջին հատվածը նվիրված է Փարամազի կյանքի վերջին տարվա նկարագրությանը՝ Պոլիս գալուց մինչև կախաղան բարձրանալը: Այս առիթով հարկ է մատնանշել այն մեծ աշխատանքը, որ Ք. Աքընը իրականացրել է արխիվային և հուշագրական նյութի ուսումնասիրության առումով[2]: Նա Փարամազի ու նրա 19 ընկերների մահապատիժը նկարագրում է ըստ միակ հայ ականատեսի՝ քահանա Գալուստ Պողոսյանի վկայության: Ակնհայտ է, որ Ք. Աքընին ոգևորում են Փարամազի՝ կախաղան բարձրանալուց առաջ ասած խոսքերը. «Դուք մեր մարմինը միայն կարող եք սպանել, բայց գաղափարները՝ երբեք: Վաղը հայությունը ողջունելու է անկախ ու սոցիալիստական Հայաստանը... Կեցցե՛ սոցիալիզմը, կեցցե՛ Հայաստանը»[3]:

«1915-ի ցեղասպանությունը» վերնագրված երրորդ գլուխը, ըստ էության, Մեծ եղեռնի պատմության համառոտ շարադրանքն է, որը թեև չի հավակնում որևէ նորության, այդուհանդերձ անցյալի նուրբ ու ցավոտ փաստերի շիտակ շարադրանքն է: Ք. Աքընը նշում է, որ ցանկացել է ընթերցողին ցույց տալ, որ Փարամազը ոչ թե այլոց, այլ թուրքերի հեղափոխական պատմության հերոսն է (էջ 218)[4]: Այսպիսի թիրախային հանրույթի պայմաններում ցեղասպանությունը ներկայացնելու այս ձևաչափը հավանաբար ամենաարդարացվածն է: Մեր կարծիքով՝ հայ ընթերցողի համար այս գլխի թերևս ամենաուշագրավ հատվածը նվիրված է հայերի զանգվածային սպանություններում «Թեշքիլյաթ-ը մահսուսա» օսմանյան ուժային հատուկ ստորաբաժանման դերակատարությանը (էջ 246-252):

Ամփոփելով հարկ է նշել, որ Ք. Աքընին լիովին հաջողվել է ընթերցողի մտապատկերում վերստեղծել թուրքական իրականության առաջին սոցիա-

---

[1] «Հնչակ», 1914, թիվ 1, էջ 8-10:

[2] Ուշագրավ է, որ սկզբնաղբյուրների մի մասը (այդ թվում՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվող ՍԴՀԿ արխիվի որոշ նյութեր) առաջին անգամ են հրապարակվել թուրքերենով: Տե՛ս նույն տեղում, էջ 286:

[3] Տե՛ս նաև **Պողոսյան Հ.**, Փարամազ (Մատթեոս Սարգսյան) // «ՊԲՀ», 1988, թիվ 2, էջ 109:

[4] Ermeni Devrimci Paramaz, CNN Türk, 20.04.2015, http://www.cnnturk.com/haber/kultur-sanat/kitap/ermeni-devrimci-paramaz [հասանելի էր 20.02.2016]:

լիստի կերպարը: 1896 թ. նոյեմբերի 18-ին Սալմաստից դստերը՝ Իսկուհուն, ուղարկած իր նկարի վրա Փարամազը գրել էր. «Աղջի՛կս, Իսկուհի ջան, ա՛ռ այս պատկերը, հիշի՛ր հորդ և գնա՛ նրա ճանապարհով, որը թեև փշոտ, բայց դեպի երջանկության ասպարեզն է տանում»[1]: Հենց այսպիսին էին ժամանակակիցները հիշում Փարամազին՝ իբրև երազկոտ սոցիալիստի ու անվեհեր հեղափոխականի: Հենց այսպիսին է նա հառնում նաև Ք. Աքընի աշխատության մեջ, որը լույս է սփռում օսմանյան պատմության՝ թուրքական պաշտոնական պատմագրության մեջ անուշադրության մատնված մի դրվագի վրա, ուստի լիովին հասկանալի է այն հետաքրքրությունը, որ գիրքն առաջացրել է թուրքական հասարակության տարբեր շերտերի մեջ:

Իբրև հետգրություն նշենք, որ 2014 թ. հոկտեմբերի 5-ին Քոբանիում իսլամական ծայրահեղականների դեմ մարտերում զոհվել էր քուրդ մարտիկ Սուփհի Նեժաթ Աղբրնասլը, ում մարտական կեղծանունը Կարմրագլուխ Փարամազ էր[2]: Այլ կերպ ասած՝ մահից ավելի քան մեկ դար անց Փարամազի ոդիսականը շարունակվում է:

ԱՐՇԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՅԿ ԴԱՐԲԻՆՅԱՆ

---

[1] **Սիրվարդ**, Փարամազ (Մատթէոս Սարգսեան): Կեանքն ու գործունէութիւնը, Փրավիտէնս, 1954, էջ Ա:

[2] Sosyolog Nejat Ağırnaslı Kobanê'de Hayatını Kaybetti, BİA Haber Merkezi, 13.10.2014, http://bianet.org/bianet/yasam/159129-sosyolog-nejat-agirnasli-kobane-de-hayatini-kaybetti [հասանելի էր 20.02.2016]: